ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1586

22.09.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ սույն թվականի սեպտեմբերի 19-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արարատի ՁՊՎ արձանագրել էր մի շարք թերություններ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՄՈՒՏՔ ԹՎ 6395
25 09 15 թ.

1. Ընդհանուր ՁՊՎ-ն գտնվում էր կեղտոտ վիճակում:
2. Բուժսենյակը գտնվում էր կեղտոտ վիճակում, իսկ սպիտակեղենը օգտագործված էր:

Մտահոգված լինելով, նշում ենք, որ Դիտորդական խումբը նախորդ այցելությունը նշված ՁՊՎ-ում կատարել էր մարտ ամսվա վերջին և կրկին արձանագրվել էին մի շարք թերություններ: Ավելին՝ նշված թերությունների վերաբերյալ Դիտորդական խումբը 31.03.2015թ-ին թիվ 2621/1521 գրությունով ներկայացրել էր Ձեզ և ի պատասխան Դիտորդական խմբի տվյալ գրությանը՝ 06.05.2015թ-ին թիվ 2/2-1-1441 գրությամբ տրվել էր մեկնաբանություն, որ «նշված բոլոր թերությունները արդեն իսկ վերացվել են»:

Դիտորդական խմբի երկու այցելությունների միջանկյալ ժամանակաշրջանը մոտավորապես եղել է վեց ամիս և վեց ամիս չի լուծվել ՁՊՎ-ի թե՛ քննչական սենյակի փոշոտ և խոնավ լինելու հարցը, թե՛ ընդհանուր ՁՊՎ-ի կեղտոտ և փոշոտ վիճակը, թե՛ բուժսենյակի կեղտոտ և օգտագործված սպիտակեղենի հարցը և թե՛ զուգարանակոնքի ջրամատակարարման համակարգի հարցը, որը, ըստ հնարամիտ ոստիկանների, լուծում է տրվել լվացարանի ջրահեռացման խողովակը տեղափոխել դեպի զուգարանակոնք, որը ըստ իրենց՝ թերությունների վերացում է համարվել */կից ներկայացնում ենք փաստը հաստատող լուսանկարներ-1,2,3,4,5,6,7,8,9/:*

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՈՒՏՔ № 4425
28 09 2015 թ.

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

Միաժամանակ խնդրում ենք ուշադրություն դարձնել լուսանկարներում պատկերված լվացարանին, հակահիգիենիկ վիճակում գտնվող սառնարանին, որտեղ սնունդ պահելն անհնարին է, բաց վարդակներին:

Ասպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3664 <<28>> 10 2015թ.

Ձեր 22.09.2015թ. թիվ 2621/1586գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբերի 19-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արարատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված փաստերն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արարատի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության կողմից կատարված ծառայողական քննության արդյունքում տրամադրված տեղեկատվության համաձայն տրվում են հետևյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. Դիտորդների խմբի այցելության օրն առավոտյան ոստիկանության Արարատի բաժնի հավաքարարի կողմից կատարվել են ՁՊՎ-ի մաքրման աշխատանքներ, որից հետո, քանի որ ՁՊՎ-ում պահվող անձինք չեն եղել, օդափոխության նպատակով բացվել են ՁՊՎ-ի բոլոր պատուհանները, սակայն բաժնի հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը և հերթափոխում ընդգրկված ՁՊՎ ոստիկանը օրվա ընթացքում պատշաճ հսկողություն չեն իրականացրել ՁՊՎ-ի մաքրության պահպանման նկատմամբ, ինչի հետևանքով բաց պատուհաններից սենյակներում առաջացել են փոշու նստվածքներ:

2. Դիտորդների խմբի այցելության պահին ՁՊՎ-ի բուժսենյակը գտնվել է մաքուր վիճակում, սպիտակեղենն օգտագործված չի եղել, այլ դրանց վրա առկա են եղել ծալքեր, որոնք օգտագործված լինելու տպավորություն են թողել:

ՁՊՎ-ի սննդի տաքացման սենյակի բաց վարդակը փոխարինվել է նորով: Քննչական սենյակի խոնավությունը կապված է բաժնի ընդհանուր շենքային պայմաններից, ինչի հետևանքով ժամանակի ընթացքում պատերի վերանորոգված հատվածները ենթարկվում են քայքայման: Ներկայումս կատարվել է մասնակի վերանորոգում, որի արդյունքում դիտորդների խմբի կողմից արձանագրված բոլոր թերությունները վերացվել են, իսկ սանհանգույցի զուգարանակոնքը փոխարինվել է նորով:

Իրենց գործառութային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, այն է, ՁՊՎ-ի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանման գործընթացի նկատմամբ ոչ պատշաճ հսկողություն իրականացնելու համար ոստիկանության Արարատի բաժնի հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը և ՁՊՎ ոստիկանը խիստ նախազգուշացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ